№ 1112/46293-21
03.11.2021

Բուզանդի 1/3, 8-րդ հարկ,
հեռ՝041 563363, էլ. հասցե՝ armenmirzoiian@gmail.com
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի լրագրող
Արմեն Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ի պատասխան ձեր հարցման (ԱԳՆ մուտքագրվել է 29.10.2021թ.)՝ հայտնում ենք հետևյալը.

1. 2021 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 7-րդ կետով նշված է, որ Ներքին տեղահանված անձինք և փախստականները ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ: Այս կետը արդյո՞ք միայն վերաբերում է ադրբեջանցիներին, թե՞, օրինակ, Հադրութի տեղահանված հայ բնակիչները ևս կվերադառնան իրենց հայրենի քաղաք:

2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո հայկական կողմը միջազգային գործընկերների հետ շփումներում բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով տեղահանված անձանց և փախստականների վերադարձի հարցում: Մասնավորապես նշվել է, որ 2020թ. սեպտեմբերին Արցախի դեմ ադրբեջանա-թուրքական ագրեսիայի պատճառով սանձազերծված 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանվել է ավելի քան 91.000 մարդ, որոնց 88 տոկոսը կանայք և երեխաներ են: Ընդգծվել է, որ առաջնահերթ է այս պատերազմի հետևանքով տեղահանված արցախահայության՝ իրենց նախկին բնակության վայրեր արժանապատիվ վերադարձի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

2. Արդյո՞ք բարձր մակարդակով հանդիպումների ժամանակ քննարկվել է եռակողմ հայտարարության այս կետի իրագործման ընթացքը:

Մինչ այժմ նշված հարցով եռակողմ հայտարարությունը ստորագրած կողմերի միջև քննարկումներ չեն եղել: Սակայն հարկ է ընդգծել, որ ռուսական խաղապահ ուժերի հետ համագործակցությամբ պատերազմի ընթացքում Հայաստանում ապաստանած Արցախի մեր հայրենակիցների մի մասը հետպատերազմյա շրջանում վերադարձել և բնակություն են հաստատել Արցախի՝ ռուսական խաղաղապահ ուժերի պատասխանատվության գոտում գտնվող բնակավայրերում: Սակայն, ինչպես արդեն նշվեց, առաջնահերթ է Արցախի՝ 44-օրյա պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակավայրերից տեղահանված արցախահայերի՝ իրենց բնակության նախկին վայրեր արժանապատիվ վերադարձի համար պայմանների ստեղծումը:

3. Եռակողմ հայտարարության 7-րդ կետում նշված «Լեռնային Ղարաբաղի տարածք» ասելով աշխարհագրական ո՞ր տեղանքն ի նկատի ունեն կողմերը:

4. Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններ ասելով աշխարհագրական ո՞ր տարածքներն ի նկատի ունեն կողմերը:

«Լեռնային Ղարաբաղի տարածք» ձևակերպումը ԼՂ հիմախնդրի շուրջ բանակցային ողջ գործընթացում օգտագործված և օգտագործվող ձևակերպում է և նկատի ունի նախկին ԼՂԻՄ տարածքը: Նույն տրամաբանությամբ՝ «Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններ» արտահայտությունը վերաբերում է հանրությանը քաջ հայտնի 7 շրջաններին:

5. ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակն արդյո՞ք այս հարցով քննարկում է ունեցել ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ:

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 76–րդ նստաշրջանի ընթացքում Նյու Յորքում գտնվող ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար Ֆիլիպո Գրանդիի հետ: ԱԳ նախարարը գերագույն հանձնակատարին է ներկայացրել Արցախի դեմ սանձազերծված ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակը և ծառացած հումանիտար խնդիրները: Անդրադարձ է կատարվել տեղահանված արցախահայության՝ հայրենիք վերադարձի համար պայմանների ստեղծման անհրաժեշտությանը:

6. 2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո արդյո՞ք քննարկում եղել է Հայաստան և Ադրբեջան 1980-ական թվականների վերջին և 90-ական

թվականների սկզբին տեղահանված հայերի և ադրբեջանցիների վերադարձի մասին:

Արդեն իսկ նշվեց, որ այս հարցով եռակողմ քննարկում չի եղել: Հայկական կողմի դիրքորոշմամբ՝ նման քննարկում հնարավոր է միայն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի համապարփակ և վերջնական կարգավորման համատեքստում:

Հարգանքով՝

11/3/2021

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

Signed by: BEJANYAN SEROB 3912720061

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտության վարչության պետ

Կատարող՝ Շիրազ Հովակիմյան
լրատվամիջոցների հետ կապի և
հանրային դիվանագիտության բաժին
հեռ. 060620234